

Սինաստան ու Հնդկաստան . որով վաճառականութեան մէջ նոր յեղափոխութիւն մը կ'ըլլայ , և այս ճամբան քան զՌարեյուսոյ Վլուխը շատ աւելի օգտակարութիւններ կ'ունենայ :

Այս աշխատութեան ձեռք զարնողները Վերիկայի (Նիկո-Վաքսոններն եղան , որոնք իրենց բնատուր աշխուժութեամբը այս բանս չորս տարուան մէջ գլուխ հանեցին : Միւթիւ դժուարութիւններ առջևնին ելաւ , բայց զարմանալի հաստատամտութեամբ ու գործունէութեամբ մը ամէն բանի յաղթեցին : Վեներէն աւելի մեծ և անյաղթելի արգելքը հոստեղի մահաբեր կիւման էր . նոր ճանապարհորդի մը ըսածին նայելով՝ 2,000 հոգի անընդհատ աշխատեցան այս բանիս , և շատերն ալ կեանքերնին կորսնցուցին . վասն զի շատ անգամ հարկ կ'ըլլար ինչուան կէս մէջքերնին այն ապականեալ ու լծացած ջրին մէջ կենալ , որպէս զի այդ ճախճախուտներուն մէջի գտնուած թունաւոր կենդանիները ջնջեն , և արմատաքի խլեն այն թունալից բոյսերը , որ կենդանիներէն աւելի փաստակար էին մարդուս առողջութեանը : Սպիտակամորթ աշխատաւորները աւելի քիչ դիմացան այս աշխատութիւններուն . իսկ ընդ հակառակն սևերը աւելի դիմացան , որով այս գործողութիւնս կերպով մը իրենք լմնցուցին : Վիւ-Վէյի ճախճախուտները դեռ ինչուան հիմա վատառողջ են . բայց շոգեկառքին արագ ընթացքովը ճանապարհորդները չեն կրնար փաստուիլ և քիչ նեղութիւն կրքաշեն : Առջ աւէն մէկ իջլեան՝ օրեր կամ շաբաթներ հարկ կ'ըլլար կենալ , որով շատ ճանապարհորդաց կեանքը կամ առողջութիւնը վտանգի մէջ կ'իյնար . հիմա հազիւ թէ կը հասնին , մէկէն ունեցածնին կ'առնեն ու շոգեկառքին մէջ մտնելով՝ իրեք ժամուան մէջ ովկիանոսի եզելքը կ'ելլեն , ուր որ իրենց համար պատրաստ շոգենաւ կեցած է :

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Հաստատուն ու հեղափոխ մարտնոց այլ և այլ յատկութիւններ , որ իրենց մասերկանցը համահասարակուն վիճակէ կը կախուի : (Տես երես 205)

Ե . Ճնշականութիւն :

Ճնշականութիւնը յատկութիւն մըն է՝ որով մարմնոց մը մասնրկունքը արտաքին ուժով մը կրնան ամփոփուիլ ու իրարու մօտենալ , անանկ որ իրեն խտութիւնը կ'աճի ու տարածոցը կը նուազի : Պէտք է որ ամէն մարմին աւելի կամ նուազ ճնշական ըլլայ . վասն զի մարմնոց մը մասնրկունքը այնչափ իրարու մօտ չեն , որ աւելի չկարենան մօտենալ : Բայց այս կողմանէ մարմնոց վրայ շատ զանազանութիւն կը տեսնուի . որովհետև ոմանք շատ ճնշական են , և այլք ալ խիստ քիչ :

Այս յատկութիւնը որոշ կ'երեւնայ այն հաստատուն մարմնոց վրայ , որոնց որ կազմութեան ծակոտկէնութիւնը յայտնապէս աչքի կը տեսնուի , ինչպէս սպունգը , սունկը , մորթը , փայտը , և այլն . թէ որ աւելի կամ նուազ ուժով այս գոյացութիւնները ճնշելու ըլլանք , մէկէն ասոր խելուրնիս կը պառկի : Ստատիկներն ալ նոյնպէս են , միայն պէտք է որ հարկաւոր ճնշմունքը տրուի . թէ որ ուժով մը կուանով զարնուի ոսկոյ , արծաթի , պղնձի , և այլն , կտորի մը վրայ , այն զարնուածքը վրան յայտնի նշան մը կը թողու , որ կը ցուցնէ թէ մասնիկները իրարու մօտեցեր են այն տեղը՝ ուր որ զարնուած է : Ստատիկներու ճնշականութեան վրայ հաստատուած է դրամահարութիւնը ու բարձրաբան դակի արուեստը : Վրամն ու միտալը իրենց կնիքը կ'ընդունին մամուլին զարնուածքովը , և այնպէս ուժով կ'ըլլայ ճնշմունքը , որ ոչ միայն դրամն իր ձևը

կը փոխէ ու կաղապարին ամէն գիծերուն տպաւորութիւնը կ'ընդունի , հապա զգալի կերպով տարածոցը կը պըզտիկնայ : Մայց շատ մարմին ալ կայ , որոնց վրայ ամենեւին ճնշման զգալի նշան մը չերևար , և քիչ մը ուժով որ զարնուելու ըլլան , կը կոտորին . ասանկ են մարմարիոնը , ապակին , բիւրեղները , և այլն : Ի վերայ այսր ամենայնի հաւանական է որ այս մարմիններն ալ ճնշելի ըլլան մինչև սահման մը . և ահա ասոր փորձը : (Ը) որ մարմարիոնի տափակ կտոր մը առնես ու վրան բարակ մը եղ կամ ճարպ քսես , ու բարձրէն նոյնպէս մարմարիոնէ գնտակ մը ձգես վրան , կը տեսնես ինկած զարնուած տեղը կըր նշան մը , որ գնտակը որչափ բարձրէն ձգես՝ այնչափ աւելի մեծ կ'ըլլայ : Մայց գնտակ մը մակարդակի մը վրայ մէկ կէտով միայն կը շօշափէ . և որովհետև այդ նշանը քիչ մը տրամագիծ ունի , ուրեմն ըսել է թէ մարմարիոնը ճինշուած պիտի ըլլայ , և մէկէն իր առաձգականութեամբը առջի ձևը առած :

(Գ) դատեսակ գոյացութիւնները շատ աւելի ճնշական են՝ քան թէ հաստատուն մարմինները : Ճնշմամբ մը , որ շատ ուժով ալ չըլլայ , ասոնց տարածոցը շատ կը պըզտիկնայ :

(Ծ) ատ երկայն ատեն կարծուեցաւ որ հեղանիւթները բացարձակապէս անճնշելի են . բայց ետքը բնաբանք փորձեցին ու տեսան որ ասանկ չէ , և թէ հեղանիւթներն ալ ինչպէս ամենայն գոյացութիւն կրնան ճնշուիլ մինչև մէկ որոշեալ չափ մը , բաւական է որ հարկաւոր ուժը գործածուի : Վտլատոն և Սդիւրմ այս նիւթիս վրայ համառօտ գրուածք մը ըրին , զոր Վաղղիոյ Վիտնական Սաճառը՝ 1827ին պըսակեց : Մայս բնաբանները գտան որ ջրին տարածոցը՝ մէկ մթնոլորտի ճնշմամբ , կամ որ նոյն է 16 լիպրա ամէն մէկ քառակուսի բթաչափ մակերևութի վրայ , իրեն նախնական տարածոցին 51 միլիոնորդը կը պըզտիկնայ .

1 Գղ. Institut de France.

ալքային կը պըզտիկնայ 93 միլիոնորդ . եթերը 150 միլիոնորդ . ծծմբային թըթուին 32 միլիոնորդ , և այլն :

Չ. Առաձգականութիւն :

Առաձգականութիւն կ'ըսուի այն ձկտումը , որով քանի մը մարմիններ սաստիկ ճնշուելէն ձևերնին փոխելէն ետքը՝ կը ջանան որ առջի վիճակնին դառնան , աւելի կամ նուազ երագութեամբ : Աստի առաձգական մարմինը այն է , որ ու կը իցէ ուժով մը ճնշուելէն ետև՝ իր առջի ձևն ու չափը կ'առնու , թէ որ ճնշող զօրութեան ազդեցութիւնը դադրի : (Ը) րինակի համար ասանկ է գաուչուն կամ առաձգական խէժը . ինչպէս նաև աղեղն որ լարը կարճեցնելով կը գողաւորեն՝ իր առջի դիրքը կ'առնէ , թէ որ լարը կըտրեն կամ թուլցնեն . ասանկ են ամէն տեսակ զսպանակներ , որ իրենց առաձգական զօրութեամբը շարունակ իրենց ծալքը բանալ ուզենալուն՝ արուեստից մէջ այնչափ օգտակար ու հարկաւոր են :

Երբոր առաձգական մարմնոյ մը մասնըկունքը իրենց բնական տեղէն շարժին , առջի դիրքերնին առնելը սովորաբար ձօճելով կ'ըլլայ՝ ըստ իւրաքանչիւրին աւելի կամ նուազ : Աստի թէ որ մէկը ջուր տուած պողպատէ թիւթեղ մը կորացնէ , որուն ծայրը տեղ մը հաստատուած ըլլայ , ու ետքը մէկէն զանիկայ ինքնիրեն թողու , իր առջի դիրքը կ'առնու , առած երագութեամբը կ'անցնի ալ նոյն դիրքը ու ետքը նորէն կը դառնայ , և ասանկով ձօճմունքներ կ'ընէ , որոնց ընդարձակութիւնը շուտ շուտ կը նուազի , իսկ երագութիւնը այլևայլ պարագաներէ կը կախուի : Յայտնի է որ այս դիպուածիս՝ պողպատին մասնըկունքը իրենց առջի դիրքը կորսնցուցին , և այն ուժն որ զանոնք իրենց առջի դիրքը բերել կը ջանայ՝ անիկայ պողպատին առաձգականութիւն կու տայ :

Առաձգականութիւնը երկու մար-

մնոց իրարու զարնուելէն ալ առաջ կու գայ : Աստի մարմարիոնի մակարդակի մը վրայ փղոսկրէ , ջուր առած պողպատէ , ահատ՝ քարէ գնտակ մը որ ձգես , գնտակը վեր կը ցատքէ ու գրեթէ մինչև այն բարձրութիւնը կ'ելլէ՝ ուսկից որ ինկաւ , որ կը ցուցնէ թէ այս գոյացութիւնները շատ առաձգական են : Այնպէս և այս փորձով մարմնոյն ճընշման ազդեցութիւնը յայտնի չըլլար , ինչպէս որ պողպատի թիթեղին կորանալովը կ'երեւնայ , բայց մարդ ճնշականութեան մէջ յիշուած կերպովը կըրնայ իմանալ թէ իրապէս մասնրկուած իրենց տեղէն շարժեր են , և թէ գրնտակին մակերևոյթը նոյն վայրկենին տափկեր է :

Առաձգականութիւնը կատարեալ ըլլալու համար՝ պէտք է որ ճնշուած մարմինը մէկէն ու կտրարելապէս իր առջի վիճակը դառնայ : Բայց շատ քիչ կը պատահի որ այս երկու պայմանները կատարուին . և միայն օդատեսակ հոսանիւթները կրնան ըսուիլ կատարեալ առաձգական մարմիններ : Բոլոր ուրիշ մէկալ մարմիններուն աւելի կամ նուազ ժամանակ պէտք է իրենց առջի վիճակը առնելու համար . և չէ թէ միայն այս կողմանէ իրենց առաձգականութիւնը կատարեալ չէ , հապաղիտուած ալ է որ շատ գործածուելով՝ գրեթէ ամէն մարմիններու այս յատկութիւնը կը կորսուի կամ կը տկարանայ : Աստի աղեղ մը որ շատ անգամ ձկտած է՝ վերջապէս առած կորութենէն մաս մը կը պահէ : Աոյնպէս ձիու բաշը , բուրդը , փետուրը , որ շատ առաձգական մարմիններ են , և տան կարասեաց մէջ կը գործածուին , ժամանակաւ իրենց ձկտման մեծ մասը կը կորսընցընեն , և միայն շատ ձեռնոտելով կամ գզելով նորէն կրնան իրենց առջի յատկութիւնը ստանալ : Շատ մարմիններ ալ կան՝ որոնց առաձգականութիւնը գրեթէ անզգալի է , և ասոնք կաշու մարմիններ կ'ըսուին՝ պինդ մարմիններուն ներհակ , որոնց վրայ առաձգական

զօրութիւնը աւելի կ'երեւայ . կակուղ մարմիններու կարգն են կապար , կաւ , և այլն :

Արուեստից մէջ գործածուած այլ և այլ տեսակ զսպանակներուն ուժը՝ իրենց նիւթերուն առաձգականութենէն կը կախուի : Այստնի է թէ զսպանակը արուեստից մէջն որ կը գործածուի՝ շատ տեսակ է ու այլ և այլ գործածութիւն ունի . երբեմն մորթի ձկտած ժապաւէն է՝ ծայրերը լաւ մը հաստատած . երբեմն երկաթի , պողպատի կամ պղնձի թիթեղէ է՝ շիտակ կամ պարուրաձև կըրած : Արբեմն փղոսկր ու փայտ ալ կը գործածուի . նոյնպէս ապակի ալ կրնայ երբեմն գործածուիլ : Օսպանակները ուրիշ ու իցէ առաձգական մարմիններուն պէս՝ երկայն աւտեն գործածուելով իրենց առաձգականութիւնը կը կորսնցընեն . վասն զի աւտով կամաց կամաց իրենց ձևը կը կորսընցընեն , և այնպիսի ձև կ'առնուն՝ որ իրենց ձկտման ատենի ձևին նման կ'ըլլայ : Չուր տուած պողպատէ զսպանակներուն վրայ այս անպատշաճութիւնը քիչ կը հանդիպի՝ քան թէ երկրթէ կամ պղնձէ շինուած զսպանակներուն վրայ . հաւանական է որ ապակիէ շինուած զսպանակներն ալ նոյնպէս ըլլան :

Կան մարմիններ՝ որոնց առաձգականութիւնը կրնայ աւելնալ արուեստից մէջ գործածուած այլ և այլ կերպերով : () րինակի համար՝ որովհետև ձայնահասն մարմինները պէտք է որ սաստիկ առաձգութիւն ունենան , զանգակներու առաձգութիւնը կ'աճեցընեն պղղնձէ շինուած որ ըլլան՝ հետը անագ բաղադրելով . երբեմն քիչ մ'ալ զինկ : Վիտուած է որ այս տեսակ խաւնուրդը աւելի պինդ կ'ըլլայ , աւելի անտեղիտալի ու առաձգական , քան թէ այն մետաղները առանձին առած՝ որոնցմով որ կը բաղադրուի :

1 Անգղիա ետքերս ապակին գործածեցին ժաւմանակաչափ գործիքներու (Գղ . Chronometre) կամ որ նոյն է ըսել ծովային ժամացոյցներու մէջ զսպանակի տեղ :

Մետաղներու մեծ մասը առանց բազարութեան ալ աւելի պնդութիւն ու առաձգականութիւն կ'առնուն թէ որ ցուրտ ծեծուելու ըզան : Վիւրին փորձ մը ըսենք՝ որով ծեծելու ազդեցութիւնը կ'իմացուի : Պղնձի երկու թիթեղ առ , և մէկը պաղ պաղ սալի՝ վրայ ծե-

ծէ . ետքը ծռէ զանոնք . թէ որ ծռելէն ետև ինքիբեննուն թողուս , ծեծուածը նորէն գրեթէ իր առջի վիճակը կը դառնայ . իսկ մէկալը ինչպէս որ կորցուցիր՝ անանկ կը մնայ :

Կը շարունակուի :

ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Կ Ի Ց Դ Է Պ Ք

Հիմնական Արեւելեան պատերազմը : (Տես երես 223)

ՆՈՅՆՄԱՐԵՐ

1. Ռուսաց կայսրը այսպիսի յայտարարութիւն մը կ'ընէ . Ռուսաստան պատերազմի գըր-գըրուեցաւ . իրեն ուրիշ բան չմնար ընելու՝ բայց եթէ զէնքերը ձեռք առնէ , որպէս զի օսմանեան դաշինքը գաշնագրութիւնները պահելու բռնադատէ և անկէջ հատուցումն առնէ այն փնտններուն , որ ինքը մեզի սուլաւ՝ մեր ըրած չափաւորեալ խնդիրքներուն ու արեւելքի յունադաւան կրօնից պաշտպանութեան համար մեր տարած խնամքներուն դէմ :
2. Սաճիկները կը յարձակին ճիւղճեւոյի վերայ , բայց Ռուսերը կը վանեն զանոնք :
3. Անգղիոյ ու Գաղղիոյ նաւատորմից վոսփոր կը մտնէ . (տես 18 հոկտ .) : Սաճիկները Գանուբը կ'անցնին Գողուրքանի քովերը , որ Ռուսաճուբի ու Սիլիսարիէի մէջերը կ'իյնայ , և կ'ամրանան Վալաբիոյ Օլգէնիձձա գեղին մէջ , որ Պուգրէշէն 16 փարսախ հեռու է :
4. Ռուսերը կը յարձակին Տաճկաց Օլգէնիձձայի մօտ կանգնած պատնէշներուն վրայ , բայց կը բռնադատուին ետ դառնալու : — Ետեւի օրերը դարձեալ կը շարունակէ պատերազմը , և 12ին Տաճիկները իրենք իրենցմէ պատնէշները օգ հանելէն ետքը՝ Գանուբի աջակողմեան ափանց վրայ կը քաշուին :
5. Երովայնի զինուորութեան գլխաւորները կ'իմացնեն Կոստանդնուպոլիս հաստատուած ռուս վաճառականներուն , որ 15 օրուան միջոցէն ետքը՝ ամէն ռուսի դրօշակով գրանուած նաւերը արքունիք պիտի դրաւուին :
6. Ռուսաստանի մաքսատանց պաշտօնեայն վաճիռ մը կը հանէ . Ռուսաց նաւահանգիստներուն մէջ գանուած բոլոր Տաճիկի նաւերը կրնան առանց արգելքի մը ինչուան նոյեմբերի 22 դուրս ելլել : Իսկ չեղբ կեցող ազգաց վաճառականական նաւերուն գալով՝ անոնք կռուին ասան ալ Ռուսաստանի կողմանէ ազատութիւն ունին :

8. Ռուսաստանի կայսրը այս հրովարտակը (տես) կը հանէ . Վալաբիոյ ու Մուլտախոյ հոսքոտարները իրենց իշխանութենէն հրաժարելով՝ այս աշխարհքներուն խնամակալութիւնը յանձնուած է ռուս օգնական պատերազմի Պուտպերկ զօրավարին , ընդ վերատեսչութեամբ Կորչաքով սպարապետ իշխանին :
10. Աւստրիոյ գահերէց դեռպան Բրոքէշ-Օսգըն պարոնը հետեւեալ ծանուցումը կ'ընէ Գերմանիոյ Գաշնակցութեան . Աւստրիա , որ հաստատ միտքը դրած է Գրան ու Ռուսաստանի մէջ ելած կռուոյն մէջ չմտնելու՝ ինչուան որ կայսրութեան անձնական օգտին դէմ փնտս մը չըլլայ , ոչ պատերազմող կողմերուն , ոչ Եւրոպայի ուրիշ մեծագոյն տէրութիւններուն բռնած ընթացքէն պատճառներ տեսաւ որ իր զինուորական ուժը աւելցնէ : Ռուսի իր զօրքին ամբողջութիւնն որ հրամայած էր քիչցընելու՝ մասամբ պիտի կատարուի , որով Աւստրիոյ կայսրական ու թագաւորական կառավարութիւնը բոլոր աշխարհքիս գրաւական մը պիտի տայ ոչ միայն իրեն առանձին խաղաղատէր տրամադրութիւններուն վրայ , այլ և ասով պիտի իմացընէ թէ ինքը յոյս ունի որ երկու մերձաւոր տէրութեանց մէջ ելած կռիւր խաղաղութեամբ լմննայ : Ի վերայ այս ամենայնի երբոր հարկ ըլլայ Աւստրիոյ որ իր մեծ շահերը ապահովցընէ՝ թէ իբրև եւրոպական տէրութիւն մը և թէ իբրև Գերմանիոյ Գաշնակից տէրութիւններէն մէկը , կայսրական ու թագաւորական կառավարութիւնը պատրաստ է շուտով ու ազդուութեամբ դործելու : Աւստրիոյ գահինձը իր խաղաղութիւն ուղելու քաղաքավարութիւնը պիտի պահէ ու միշտ պիտի ջանայ որ այս տեղական կրակը ամենակին չտարածուի , և Բարիզու ու Լոնարայի արքունիքներուն հետ միաբանած՝ այս կռիւր խաղաղութեամբ լմնցընելու միջոցները պիտի փնտսէ , ինչպէս որ ինչուան հիմա կ'ընէր : — Բրուսիոյ Գերմանական Գաշնակցութեան համար ունեցած դեսպանը կը յայտնէ թէ Բրուսիոյ թագաւորական կառավարութիւնն ալ գաշնակից

1 ՏՃ . Էօրս :